

ԳԱՐՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

Կենսագրական ուսւածք

Գ Ե Ո Ր Գ Զ Մ Շ Կ Ե Ա Ն Ի

Անմոռանալի Ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպոսը հիմնարկելով
Ներկաւ Ներսիսեան Դպրանոցը, անհրաժեշտ համարեց հրաւիրել ամեն կող-
մից զարգացած հայ ուսումնականներ, որոնք հետեւլով նորա հայասիրու-
թեան զաղափարին, կարողանակին տարածել Թիֆլիսաբնակ հավերի մէջ
իրանց մոռացած մալքինի լեզուն, Խրոպական լուսաւորութիւնը՝ կից աղ-
գասիրութեան հետ:

Ի թիւս ալդ հրաւիրւած զաղափարասէր անձանց՝ էր և Յակոբ Շա-
հան Զրպիստեան՝ Եղեսացի, ան ժամանակաւ Խրոպական գրականութեան
մէջ լաբոնի արևելեան լեզւագէտ Ծիցիօծ Փրանսիացին:

Ալդ հոչակաւոր ուսումնականի Թիֆլիս գալուց առաջ, Անչսխատ
անուանած թաղում, բնակւելիս է եղել Գարբիէլ Սունդուկեանցի հայր
Մկրտումը իւր սեպհական տանը, Խրոպական ճաշակով շինւած, որը
Թիֆլիսի մէջ ալդ ժամանակ նորութիւն է համարելիս եղել:

Մկրտում Առնդուկեանցը (ալդաէս էր կոչումնա) սպարապում
է եղել վաճառականական գործերով, ինչու համար և լաճախ ացելել
է Խրոպական շատ քաղաքներ և մի քանի անգամ Լէսլիցիդ:

Ահա՞ ալդ տան մէջ, 1825 թ. լուսիսի 29-ին, ծննում է մեր տաղան-
գաւոր գրամատուրդ Գարբիէլ Սունդուկեանցը:

Մկրտում Առնդուկեանցը, վախճանելով 1831 թ. մայիսի 22-ին, քա-
ռասուն և ինեւ տարեկան հասակում, թողնում է իւր որբնակրի
Թինաթին կամ Թեկդինէ ամուսնուն, շրջապատւած երկու արու՝ Գարբիէլ
և Մկրտում և մի աղջիկ՝ Ռէսլիմէ զաւակներով:

Մկրտումի մահից լիսու, Թինաթին Սունդուկեանցը տեղափոխում է
իւրեանց մի ուրիշ սեպհական տունը, «Փռանգներ» անուանուած թաղում,
և ալդ ժամանակամիջոցին, զայիս է Թիֆլիս վերսկիշեալ ուսումնական
Զրպետեանը իւր Փրանտուհի, ըստ ծննդեան Denise Margueritte Wolantum

ամուսնու հետ և բնակում է Սունդուկեանների Անչսխառի թաղում գտնած
տանը՝

Մեր հեղինակի մաքրը, մօտիկ ծանօթանալով ալդ նորեկ գերդաստանի
հետ, նկատելով ուսումնականի գիտնական դիրքը, տեսնելով նորա մօտ
գրքերի կիտաձներ, պատերին կախ արած քարտէզներ, վճռում է տալ
ուսման ալդ գիտնական ընտանիքին՝ իւր անդրանիկ զաւակ Գաբրիէլին,

Ազգային ահա՛, տաղանդաւոր հեղինակը սկսում է պարապել Զրպե-
տանի մօտ, ապրիլի մէկից 1832 թ. ամն առաւոտ 8 ժամից սկսած՝
մինչև երեկուեան 8 ժամը.

Զրպետեանը պարապելիս է եղել Սունդուկեանցի հետ հակերէն գրա-
բար, իսկ նորա ամուսինը՝ Փրանսերէն լեզու, որոնցով և աւանդելիս
են եղել նորան երեխական հասակին մատչելի ամն տեսակ գիտու-
թեան ճիշդերը.

Իսկ ոռուերէն լեզուն ուսանելու համար, Սունդուկեանցի մաքրը ու-
ղարկելիս է եղել նորան պարապելու երեկուեանները՝ նախ մի կաթոլիկ
ուսուագէտ ոմն Մամուլովի և վետով բարոնի հակադէտ Արարատեան վար-
ժապետի մօտ:

Զրպետեան ամուսինների աղջեցութիւնը աճնքան խոր տայտարութիւն
է անում Սունդուկեանցի մանկական սրտի վերակ, աճնքան նա սի-
րելիս է լինում նոցա, որ մինչև օրս, անուանելով նոցա իւր երկրորդ ծնող-
ները, մեծ հոգատարութեամբ պահում է նրանցից մնացած որ և իցէ վ-
շատակի արժանի թէ՛ գրութիւններ և թէ՛ չնշին իրեղէններ, ի շարս ալլոց
և մի ժամացուց, որը նվիրած է լինում նորան Զրպետեանի ամուսինը,
նորա մօր ձեռքով. Օդուառուի 16-ին, 1833 թ. վախճանւում է Զրպետեանը
և աքնուեան Գաբրիէլ Սունդուկեանցը մտնում է Արդանովների պանսիօ-
նը, որտեղ ուսումը աւարտելուց վետով, քառասուն թականին, անցնում է
գիմնազիօն և ազդեղ ուսումը աւարտելուց վետով, 20-ին օգոստոսի 1846 թը-
ւականի, գնում է Պետերբուրգ և մտնում աճնեղի համալսարանի պատ-
մա-լեզուագիտական մասնաբանինը.

Ազգտեղ նորա համալսարանական չորս տարւակ ուսման ընթացքում,
գրգռում է նորա մէջ սէր զէպի թատրոնը և նա հիացած ան ժամանակ-
ւակ անտեղի Փրանսիական երեսնի գերասանուհու տ. Արծօլդ Պէէսիի և
Բերտոն և Ալլան զերասանների խաղով, համալսարանական ուսումն աւար-
տելուց վետով, դառնում է իւր հագենիքը՝ Թիֆլիս, քսան և հինգ տարե-
կան հասակում:

Ակտուղ մտնում է փոխարքակ Վօրօնցօվի կանցելարիան, որտեղ
ծառագրում է մինչև 1854 թ. և ալդ տարւանից տեղափոխում է դար-
ձեալ տէրունական պաշտօնով Դերբէնտ քաղաքը, ուր և շարունակում է
իւր ծառագրութիւնը մինչև 1858 թականը.

Դառնալով դարձնալ Թիֆլիս, 1860 թ., նա նշանակում է անդամ

Գաւառական վարչութեան շինութիւնների բաժնում և ալդ մասնագիտական գործունէութեան միջոցին աշնազիսի նորաձև և իմաստալի տոկունութիւն է ցուց տալիս, որ՝ երբ մի երկու տարի ընդհատելով ալդ պարապմունքը, դարձեալ տեղափոխուում է Փոխարքավի կանցելարիան, ալդ ժամանակաւ Թիֆլիսի Գաւառապետ հանգուցեալ Օրլօվսկին, տեղեակ լինելով. Սունդուկեանցի շինութիւնների մասնագիտական բարի համբաւին, հրաւիրուում է նորան կառավարիչ-անդամ Թիֆլիսի Նահանգական վարչութեան շինութիւնների մասնարամին մէջ, որտեղից հետզհետէ տէրունական բարձր աստիճանների հասնելով, տեղափոխուում է ճանապարհների հաղորդակցութեան (Վորավեր Պուտեյ Հօօցանութեան) վարչութեան ծառալութիւնը, ուր ներկայուում կրում է տնտեսական մասի կարգադրիչի պաշտօնը, պետական խորհրդականի, ըստ զինուրականի՝ ժէնէրալի աստիճանով.

Ալդ ժամանակ Նախարարութիւնը, կարծես, հոգ տանելով ապագաւ տաղանդաւոր դրամատուրգի գործունէութեան մասին, հանդիպեցնուում է նորան օրիորդ Սօֆիակ Միքիմանեանցի հոգ՝ ալդ ժամանակւաէ համար հազլագիւտ մի երեսք, հազ հոգով դաստիարակւած մի աղջիկ, որի հետ պսակուում է Սունդուկեանցը 16-ն լունիսի 1863 թւականին. Սունդուկեանցը գոնուում է իւր ամուսնու մէջ, իւր ապագաւ գործունէութեան համար, մի աշխատակից ընկեր, որը իւր կանացի նուրբ քննապատական հալեացքով, թէ՛ օգնում է նորան՝ հեղինակին տիպերի մշակելու գործում, թէ զըրում է նորան թելադրութեան ներքու և թէ վերջապէս, հանդիսանուում է իրեւ հոգածար կին, որպէս մարդուն օրինակելի ամուսին և օրինակելի մայր զաւակներին:

Սկսուում է 1863 թւականի աղմկալից նորաբողբոջ հազ թատրոնական բեմի գործունէութիւնը՝ շնորհիւ մի քանի սեմեն արիստոնների, որոնց պարագլիւ լինում են հանգուցեալ Միհրդատ Ամերիկեանը և մեր քանքտրաւոր վիպասան—բանաստեղծ Գերծ Պռօշեանցը:

Հազ թատրոնը կեանքի նշովը զգալուն պէս, ալդ արժանավիշտուակ ժամանակ, դուրս է ցատկում իւր մութ անկիմներից Թիֆլիսի քաղաքացին թատրոնի բնմը, խաչընդու հանդիսանալով անգամ խոալական Օպէրակի ներկայացումներին:

Մէկ անգամ մեր քանքարաւոր հեղինակը, ներկաւ գոնւելով Արշակ Բ. Գալֆակեանի ողբերգութեանը, որից վետով խաղում են «Դալալ-Ղաղօ» վօղեկիլը, հեղ. հանգուցեալ բժիշկ Փուղինեանցի, և համեմատելով ալդ ժամանակւաէ խեղճ հազ թատրոնի դերասանների խաղը իւր տեսած հոչակաւոր Գրանսիացի դերասանների խաղի հետ, մոտածում է՝ եթէ Փուղինեանցը կարողացաւ մեր չշշասպառ հալութեան կեանքից դուրս բերել Դալալ-Ղաղօի և Սանդուխտի տիպեր, միթէ նա, Սունդուկեանցը, չի կարսղ ուրիշ գոցա նման ազգակին տիպեր բեմ դուրս հանել... Եւ ահա

բափշտակւելով՝ Դաւալ-Ղաղօի դերակատար Առաքիասեանի կենդանի խաղով, նա մի օր թելադրում է իւր ամուսնուն «Գիշերաւան Սարրը խեր է» գողեկիլը, որը և խաղում են Թիֆլիսի քաղաքակին թատրոնում հոկտեմբերի 23-ին, 1863 թւականի. Այդ խաղը մեծ աղմուկ է հանում և չելալով որ նա գրւած էր Առաքիասեանի Դաւալ-Ղաղօի դերակատարութեան առիթով, մեծ լաջողութիւն ունեցաւ այդ պիեսի մէջ մի երկրորդական դեր՝ Արութին ձարտարովի դերը, որը առաջին անգամ խաղաց Սեղրակ Մանդինեանցը.

Առաջին լաջողութիւնը ձեռք բերելուց լետու, մեր տաղանդաւոր հեղինակը ձեռնամուկս եղաւ Օսմաթարալար՝ կօմնդիալի գրութեան և ահա թէ ի՞նչ պէս. Նա ունէր իւր տանը երկու պատկեր, որնցից մէկը ներկապացնում էր մի տան պատուհանում կանգնած մի գեղեցիկ կին, որին ուղում է լանձնել մի ծաղկեակ փունջ՝ տակառի վերաւ բարձրացած երխոսարդի մէկը, միւսը, ինչպէս այդ երիտասարդը, կորցնում է հաւասարավշութիւնը և վայր է ընկնում տակառի վերավից:

Յափշտակւելով այդ չնշին բնարանով, մի քանի օրեւադ մէջ դրում է 1865 թ. «Օսմաթարալար» կօմնդիան երկու արարւածով, որը ներկապացւեց միւակն 7-ին ապրիլի, 1866 թւականի, դարձեալ քաղաքակին թատրոնում. Այդ պիեսն անպիսի հոչակ հանեց, որ, չեապատ ներկապացումների ժամանակ, մի շաբաթ առաջ թատրոնի կաստախոմ բոլոր տոմսակները վաճառւած էին վիճում. Այդ պիեսի մէջ առաջին անգամ երեան եկաւ հանգուցեալ Ամերիկեանի ուժգին տաղանդը՝ Գարասիմ Եսկուլիչի դերակատարութեան մէջ, որը հետզհետէ զօրանալով, հասաւ իւր գագաթնակէտին «Աւագակների» Ֆրանց Մօրի դերի մէջ¹⁾. Ցետու այդ պիեսը կերպարանափոխւց նախ՝ երեք արարւածի և ապա, 22-ին նոյնմերի 1879 թ. նա ներկապացւեց չորս արարւածով և վեց պատկերով:

Ազնուհեան Սունդուկեանցը ուսումնասիրելով Ակրիբի, Շիլէրի ու Շեկոպիրի գրւածները, «Օսկան Պետրովիչը Երազումը» գորգիկ Փարսը դըրելուց լետու, ձեռնամուկս եղաւ «Ելի Մէկ Զոհ» կօմնդիալի մշակութեանը:

Այդ պիեսի մասին ևս ունիմ տուած մանրամասն տեղեկութիւններ պատրունական վիշողութիւններու-ի մէջ՝ «Փորձ» ամսագրում. Ներկապացւեց այդ պիեսը միւնուն քաղաքակին թատրոնում 1870 թ. մայիսի 4-ին.

«Օսմաթարալարից» լետու, «Ելի Մէկ Զոհ»-ի ներկապացման դերասանական անսամբլը կատարեալ լաղթանակ ձեռք բերեց հեղինակի տաղանդը պատկելու համար.

Նւարդ Մելիք-Նաղարեանցը (ներկապամս տ. Իզմիրեանցը), երկու

1) Տես «Փորձ» ամսագրի «Նոյմ թատրոնական յիշողութիւններ»:

դեր կատարելով ալդ պիեսի մէջ, մէկումը ձևացրեց աննման պճնասէք և փառամոլ պապակ գնդապիտ տիմար Սազոր Սիմօնիչի (հանգուցեալ Միքաղեանց) կնոջ դերը. նորա աղջկաւ, ալն ժամանակւաէ համար իդէ-ալակ ան հոգով զարդացած և կրթւած օրիորդի դերը, վերին աստիճանի նրբութեամբ կատարեց առ. Սաթենիկը (ներկալումս Նդիսարէթ Զմշկեանց). Ամերիկեանցը հասու ազօգէվին իւր աննման խաղով, հարուստ վաճառական Սարքսի, երբեմն Սաքօի դերում. մնացածները ամնաքը իրանց դերերը խղճմուանքով կատարելուց լսող, արժանացան բուռն ծափահարութիւնների և վաստակեցին անվերջ «կեցցէներո» հեղինակի հասցէին, որը շրջապատւած դերասաններով մի քանի անգամ բեմ դուրս եկաւ ողջունելու ալդ անկեղծ ջլրմ ծափահարութիւնները:

Ալդ երկու լուրջ կօմեդիաները բեմ հանելուց լսող, Սունդուկեանցը արդէն ամենայն իրաւունքով վաստակեց զրամատուրդ հեղինակի անոնչը և մնաց միակ բեմական բանաստեղծ-հեղինակ հանդուցեալ Տէր-Դրիգորեանցի մահից լսող, որի մի քանի չնորհալի վօդեվիլները մինչև ալժմու մնում են աղքատիկ հայ թատրոնի բեմի վերաւ:

Ալդ ժամանակամիջոցին, «Խաթարալավի» և աչլի Մէկ Զոհի հեղինակը, մի երեկոյ աւցելելով հաներէն ներկալացման, «որը քաղաքավին թատրոնի բնմից աքսորւած լինելով՝ բուն էր զրել ժամանակաւորապէս Գերմանացոյ ժողովարանի դահլիճում, հաւանել էր իմ մէկ չնչին դերակատարութիւնը, հանդուցեալ ֆուլինեանցի «Աւուր արաքվիս պիտի պսակվիս» Սօլիէրից փոխադրւած Թիֆլիսի կեանքին լարմարեցրած պիեսի մէջ, Շամիր կինտոփի կամ պատահ ունի ի դերում: 1) Դորանից զրդւած, նա վճռում է զրել մի նոր պիես, որի բովանդակութիւնը առնւած լինի ալդ պաժարնիների կեանքից. և ահա 1870 թւականին, սկսում է զրել «Պէպօ» հանրածանօթ կօմեդիան, որը և ներկավացնում են առաջին անգամ դարձեալ քաղաքավին թատրոնում 1871 թ. ապրիլի 30-ին:

Հանդիսականները ապշեցան. հեղինակը զմավեց: Պէպօն ատացաւ շեմ-ձօւնցը-ի հեղինակութիւննախթաբալավի և լիբ մէկ Զոհի համեմատութեամբ և ալն աստիճան նա ժողովրդականացաւ, որ առաջին ներկալացումից լսող, հազիւ անցաւ մի ժամանակամիջոց, որ վրաց ինտելլէգէնսա երիտասարդութիւնը, կամնալով վերանորոգել վաղուց դադարած վրաց բեմի գոլութիւնը, սկսեց ալդ պիեսով իւր առաջին, մեռելութիւնից դէպի կեանք վերածնւող վրաց բեմի գործունէութիւնը: Վրաց բեմի վերակ Պէպօն ալն աստիճան վրացիացաւ, որ ներկալումս դեռ ևս կան վրացիք, որինց գժւար է հաւատացնել, որ ալդ պիեսի նախատիպը աշխարհ է եկած հաներէն լիզուով, որ նա բղասած է հայ բանաստեղծի հոգուց: Աղացուց՝ որ նախ, երբէք «Պէպօ»-ի ներկալացման

1) Տես «Պէպօյի» յառաջարանը:

ժամանակ աֆիշի վերաէ չէ վշտում, թէ նա թարգմանութիւն է հակերէնից. խսկ երկրորդ հանգամանքը հալութեան համար վիրաւորիչ՝ վիրական իմաստակութեան մի բնարող երևովիք է ներկավացնում, ան է, որ Պէպօին, աղդ իսկական հալ պաժարնու նախատիպ հերոսին, վրաց բամի վմրաէ զուք կը տեսնէք վրաց ազնւական երիտասարդի գրիմով, ան ինչ՝ հարստանարող, հաւ վաճառական հարուատ Արութինին՝ անպատճառ ծաղրածու հաւ վաճառականի դիմակով. Ալպէս շարուճակնելով, մի քանի տարուց քետո՛ հաղիւ թէ գտնւի Վրաստանում մի վրացի, որ հաւատաւ թէ «Պէպօն» գրւած է հակերէն լեղով և թարգմանւած վրացերէն և ոչ թէ հակառակը, և թէ Պէպօն, կակուլին, Արութինը և ազն, բոլորը վերցրած են հալութեան շրջանից և որ հալութեան պակասութիւնները հաւ բանաստեղծից են մըտքակւած.

Եթէ ալս ալսպէս է, իմ կարծիքով վրացիք շատ անխոնեմ և անիրաւացի են վարւում, երբ հաւ բանաստեղծ Սունդուկեանցի հերոս Պէպօի ճակատին դրշմում են բեմի վերաէ քար թվելո (վրացի) և Արութինի ճակատին սօ մէ խօ (հաւ) կոչումները. Ինչով է մեղաւոր Սունդուկեանցը, որ հաւ կեանքի մէջ է փնտաել և որոշել մարդուս լաւ ու վատ կողմնըրը. Ինչու մենք եւրոպացոց հեղինակութիւնները պարագ ենք համարում նըշ տութեամբ թարգմանել, խսկ մէկ հալքնակից հաւ հեղինակի բանաստեղծութիւնը շինել գալթակութեան մի ինուիր.

Ներողութիւն, թէն հեռացակ հարցից, բաց հարկաւոր է, որ մեր տաղանդաւոր հեղինակի իմ թով գրչովս տած կենսագրութեան հաշւի մէջ զետեղէի ալս ինուիրը, որ վրաց համար գալթակութեան քար է դառնել. իրանց բեմի վերաէ վրացին միշտ անշահասէր և ազնիւ է, խսկ ամեն մի հաւ մի տեսակ գոփող—գյլողի տիպար է, մարդկութեան սեպհական զգացմունքից զուրկ մի էակ.

«Պէպօն» անպէս գրգռեց ամրող Թիֆլիսի հասարակութիւնը, որ անդամ ուսւաց ինտելեկտէնցիան հետաքրքրւեց ալդ պիեսի բովանդակութիւնով, անկապաղ թարգմանեց նորան ուսւերէն և, եթէ չեմ սխալւում, 1879 թւականին երկու անգամ աւլին նորա ուսւերէն ներկավացումը քաղաքակին թոսորոնում, թատրոնական անտրապիէնիօր Պալմակի խմբով.

* * *

«Պէպօ»-ի ներկավացումից լետու, միենոն տարւակ ամառը, Սունդուկեանցը գրեց «Քանդուած Օջախ» կօմնուիան, որի նիւթը վերցրել էր մեր վաճառականական դասակարգի կեանքից.

Ալդ պիեսը ևս խաղացեց քաղաքակին թատրոնում, 19 ապրիլ 1873 թ. թատերասէրներից դորա համար լատուկ կազմւած խմբով. Խաղը գնաց գեղեցիկ և պիեսը ունեցաւ մեծ չաշողութիւն. Բացի ալս հիմնաց գեղեցիկ և պիեսը ունեցաւ մեծ չաշողութիւն. Բացի ալս

ւոր պիեսներից, Սունդուկեանցը գրած ունի և մի քանի վօղելիլներ, ինչպէս «Օսկան Պետրովիչը երազումը» և ալին, «որոնք մնացած են անախաւ».

* * *

Ուրիմն, 1863 թւականից մինչև ներկաւա, տաղանդաւոր հայ բնեմական հեղինակը տեղ է հայ հասարակութեան չորս նշանաւոր բեմական թատրուրգութիւններ—աճն է՝ «Խաթաբալաբա», Աշլի Մէկ Զոհ», «Պէսո» և աթանգուած 0ջախ»։ Խաղեր, որոնց մէջ կենսագրուած է ամբողջ Թիֆլիսի համբիթի կեանքը։ իւր ուրախ թէ տփուր, լուրջ թէ ծիծաղաշարժ տեսարաններով, Ալսպէս, օրինակ, հեղինակը իւր գործունէութեան սկզբում, «Գրիշերուան Սաբրը Խէր է» ծաղրածութեան մէջ, Օսկան Պետրովիչի տիպով ցուց է տալիս հին և նոր հայ սերունդների կեանքի կօմիքական երեւոթիւնները։ կետու «Խաթաբալաբա»ի մէջ նա արդէն բացատրում է Գարասիմ Եսկուլիչներից և Սասիսեանցներից բաղկացած հասարակութեան կազմը, դուրս բերելով մէկի խարերապութեան սիստեմը, միւսի, արդ սիստեմի տակ ճնշւածի, բացականչութիւնները և անկարողութիւնը մարտնչել ստութեան դէմ։

«Ելի Մէկ Զոհի» տաղանդաւոր հեղինակը, շարունակելով իւր դիտողականը, արդէն որոնում է պատճառները՝ թէ արդեօք ինչո՞ւ հայ երիտասարդը անզօր է դիմացրելու հին հին սերունդի սիստեմին, ինչո՞ւ զարգացած համալսարանական Միքայէլը, զինւած լոգիկական դատողութիւններով, դարձեալ ընկճուամ է հին սերունդի հզօր սօֆիզմների արտաքարտութիւնների ներքու։ Եւ լետու, կարծես դժւարանալով ալդ հարցերը լուծել ունենոր հօր և նորանից կախած որդու մէջ, նա զիմում է ամբոխին և ահա՛ նորա չը մարած կենսական գորութիւնից հրապարակ է հանում ձկնորս Պէտօին և նորա ուժեղ բռունցքներով ասլուակում է փտած, հին վաճառականութեան խարդախ սօփիսսառութիւնը։

«Բանդուած 0ջախում» հեղինակը որոնում է ալդ հասարակութեան կեանքի մէջ բոլոր տարակուսանաց նախապատճառը և, հետևելով Փրանսիական ստածին «chercher la femme», կանգ է առնում մեր կէկէլօնների և բարիշնիանների վերակ և լուծում է խնդիրը աճնպէս, որ ամենախն չարեաց սկզբնապատճառը մեր կանաց տգիստութիւնն է և պճաախրութիւնը։

Ալսպիսով, իւր քսան և հինգ տարւակ գործունէութեան միջոցին, մեր միակ, լաս եւրոպական հասկացողութեան դրամատուրգ հեղինակը, զննելուց լետու Թիֆլիսի հայ հասարակութեան մէջ երևացող կեանքի լաւն ու վասը, նորան զբաղեցնող կնճուա խնդիրները, հրապարակ հանելուց իետու խարերակ Գարասիմ Եսկուլիչին, բռնակալ որդիասէր, միւնուն Գարասիմ Եսկուլիչի խարերապութեան սիստեմին հնաւուղ Սալքսին, վաշխառու Ալութին Զիմպիմովին և Փասօին և pendant ալդ հրէշներին, նրանց

որոգալթը ընկած և նրանց ոստաղնում կապւած պարզամիտ և ազնիւ հասկացողութեան տէր և ճշմարտութեան անձնասուր, բաց և թուլամորթ երիտասարդ Մասիսանցին, թովլ բնաւրութեան տէր ուսումնական Միքայէլին, արիսախրտ ձկնորս Պէտօին և կանանց պճասիրութեան գոհ Գուլարենց Օսէփին և սրանց շրջապատող միշտ բողոքող, բաց և անզօր պառա-մալրերին, աղեղ, բաց բարեհողի օրիորդ Մարգրիտին, իդէալական հոգով զարգացած Անանին, ձկնորսի քնքով քուր կէկէլին և ալզ—մեր քանքա-րատոր հեղինակը մտել է նորերումն Թիֆլիսի հակութեան սալօնների դի-մակաւորւած շրջանները և աճանեղից հրապարակ է հանել «Ամուսիններ» անունով չորս արարւածով մի նոր պիես, որի մէջ հրապարակ է դուրս գալու սալօնների թեթեառլիկ, բաց դիմակաւոր սերունդը, որի լծի տակ ճնշում է խակական առաքինութիւնը և նուրբ հասկացողութեան տէր երի-տասարդութիւնը.

Մեանք լի հաւատով, որ մեր քանքարաւոր դրամատուրգին սպասում է զործունէութեան գեռ ևս փառաւորագոյն ապագա: